օրենսդրությամբ նախատեսված հայցադիմումի պատասխան և ապացույցներ ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետները, որի անբարենպաստ հետևանքները կրում է Պատասխանողը, հետևաբար պատասխան-դիրքորոշումը քննարկման ենթակա չէ:

Ամփոփելով վերոգրյալը, սույն գործի փաստերի և իրավակարգավորման պայմաններում, Դատարանն արձանագրում է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2024թ.-ին կազմված թիվ 5 արձանագրությունը՝ Նէեմիա Արթուրի Ավակիմյան Ա/Ձ-ին պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու և Նէեմիա Արթուրի Ավակիմյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը կայացրել է վերը նշված նորմերի պահանջների խախտմամբ:

Այսպիսով դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից ներկայացված հայցը ենթակա է բավարարման՝ վերը նշված պատճառաբանություններով:

6.Դատական ծախսեր.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի՝ Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցվոր ընկերության կողմից ներկայացված հայցապահանջով վճարվել է պետական տուրքի գումար 72.000 ՀՀ դրամ:

Հետևաբար Պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել վճարված պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել.

1.Անվավեր ճանաչել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2024թ.-ին կազմված թիվ 5 արձանագրությամբ՝ Նէեմիա Արթուրի Ավակիմյան Ա/Ձ-ին պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու մասին կայացված որոշումը:

2.Անվավեր ճանաչել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2024թ.-ին կազմված թիվ 5 արձանագրությամբ՝ Նէեմիա Արթուրի Ավակիմյան Ա/Ձ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով համայնքի ղեկավարին դիմելու մասին կայացված որոշումը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանից հօգուտ Նէեմիա Արթուրի Ավակիմյան Ա/Ձ-ի բռնագանձել 72.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am